

ԳՐԱԿԱՆՈՒՄԿԵՐՆ

“ԼԻԱԿԱՏԱՐ ՔԵՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՑ ԼԵԶՈՒԻ ՀԱՄԵԱՎԱՆՈՒԹԵԱՄԲ 562 ԼԵԶՈՒՆԵՐԻ”

Ն Ե Ր Ա Ծ Ո Ւ Թ Ի Ւ Ն

ՃՐԱՋԱՑ ԽԱՍՏԻԵԼՆ — ԵՐԵՎԱՆ — 1955, Էջ 655

Թ. — Զին-թիվերական Ղետանիք. — Այս յորդողաւումին տակ լեզուարանները կը հասկնան այն բոլոր լեզուները, որոնք կը խօսուին Հիմարայախան լիոններէն մինչեւ Խառդաղական Ավկիանոս երկարող ընդարձակ տարածութեան վրայ: Կը բաժնուին երեք ճիշդերու.

1. — Թիվեր-պիրմանական :

2. — Զինական :

3. — Թայ:

1. — Թիվեր-պիրմանական ճիշդը կը խօսուի Թիվերի և Պիրմանիոյ մէջ. 20 միլիոն խօսով ունի: Քրիստոսէ տաւշ, յիշեալ երկիրներու այժմու բնակիչները հաստատուած էին աւելի հրւիս, ուրեկէ պատարշաւելով գէպի հրատակ գրաւեցին Մուն-հմէր և Մունտա լեզուներու ասպարէզը: Այս ճիշդին կը պատկանին հարիւրէ աւելի լեզուները, որոնցմէ երկու զիւսաւորներն են թիվերներն և պիրմաններն: Թիվերէրէնը պուտայական ճոխ գրականութիւն մը ունի, որու հնագոյն յիշատակարանը է. զարէն է: Պիրմաններէնի հնագոյն արձանագրութիւնը ԺԱ. Դարէն է: Նոյն ճիշդին կը պատկանի նաև պիլ կոչուած լեզուն, որ ծանօթ է մի քանի հին արձանագրութիւններով և որ այժմ կորսուած է: Տես Sir George A. Grierson, Linguistic Survey of India, 3 հատուր, Tibeto-Burman Family, Part I, General Introduction, Specimens of the Tibetan Dialects, The Himalayan Dialects and the North Assam Group, Calcutta, 1909; Նոյնէն Pt. II, Specimens of the Bodo Naga and Kachin Groups, Calcutta, 1903; Pt. III, Specimens of the Kuki-chin and Burman Groups, Calcutta, 1904.

2. — Զինական նիւդ: Զինարէնը աշխարհի վրայ ամենէն չառ խօսուած լինուին է: մօտաւորապէս 650 միլիոն մարդիկի, եւ բովայէն աւելի ընդարձակ տարածութեան մը վրայ, կը խօսին այդ լինուով: Տակաւին, շինարէնը կը խօսուի Մանչչուրիոյ, Մոնկուլոյ մէկ մասին և Հնդկաստանի ու մինչեւ իսկ Ամերիկայի զանազան գաղութներուն մէջ, այնպէս որ չինարէն խօսողներու թիւը 700 միլիոնի կը մօտանայ: Զինարէնը նշանաւոր է իրբեկ մշակութային լիգու և մեծապէս ազգած է Հեռաւոր Արքելքի բազմաթիւ ազգերու վրայ: Անհամարէ, ծափոն, իրենց չականթային և լեզուական պաշարի մէկ մեծ մասը պարտական են չինացիներուն: Զինական գրականութիւնը շատ հին է և կը սկսին Ն. Ք. Չըր հազարամիակէն: Ան թափանցած և գործածական եղած է նաև գիրոյիշեալ երկիրներուն մէջ: Զինարէնը ունի բազմաթիւ բարատանիր, մէկը միւսին անհամակիրի: ամենազլիւաւորն է Մանչարիններու լեզուն՝ որ կը կոչուի կուռան-հուռ և կը համարուի պետական կամ պաշտօնական լեզու: Հաստատուած է որ բոլոր այս չինական բարարանները կը ծագին ընդհանուր չինարէն լեզուէ մը՝ որ խօսուած է Թանկ հարստութեան ժամանակ: Տես F. S. Couvreur, Dictionnaire classique de la langue chinoise, Յըր հրատ., Ho-kien-fou, 1911 (գրաւոր լեզուն). Նոյնէն՝ Dictionnaire français-chinois, Ho-kien-fou, 1928 (խօսակցական լեզուն). H. A. Giles, Chinese-English Dictionary, Յըր հրատ., Shanghai, 1912 (գրական և խօսակցական լեզուները). R. H. Mathews, A Chinese-English Dictionary, with English Index, Shangai, 1931; Revised American Edition, Harvard University Press, 1945 (արդի չինարէնը). B. Karlgren, Analytic Dictionary of Chinese and Sino-Japanese, Paris, 1923 (Միջին չինական արտասանութեամբ).

3. — Թայ նիւդ: Այս լեզուախումբը տարածուած է Հնդկաչինի արեւելեան կեսէն մինչեւ հարաւային չինական գաւառները: պատիկ խմբակներ ալ կան մինչեւ Հնդկաստան: Ամենազլիւաւորն է սիամիւնը, զոր կը խօսին Յ միլիոն մարդիկ: ունի ճոխ գրականութիւն, մկ. դարէն

սկսեաւ: Անոր կը նմանի լառուրեկնը, որ Հնդկաշխի Լաոս հրկրի լեզուն է: Տես Henri Maspero, Contribution à l'étude du système phonétique des langues thai, Bull. E. Fr. E.-Or., XI, 1911, էջ 153-169. նոյնէն Langues (et Carte linguistique de l'Indochine) dans Un empire colonial français, l'Indochine, ouvrage publié sous la direction de Georges Maspero, tome I, Paris-Bрюссель, 1929, էջ 63-80. K. Wulff, Chinesisch und Tai, Sprachvergleichende Untersuchungen, Det Kgl. Danska Videnskabernes Selskab., Hist.-fil. Meddelelser, XX, 3, Copenhague, 1934; նոյնէն Ueber das Verhältniss des Malayo-Polynesischen zum Indochinesischen, ib. XVII, 2, 1942; Li Fang Kuei, Some Old Chinese Loan-Words in the Tai Languages, Harvard J. As. St. VIII, 1945, էջ 333-342:

Ժ. — Աւելո - Ֆիննական հնագույնք. — Այս խումբին պատկանող լեզուները այժմ կը լուսածուին Հունգարիային մինչև Եւրոպայի հրւիսային ծայրը և այնտեղէն, Ռուսիայում վրայէն, մինչև Աւրալ լեզուներու ասիական մասը: Այս լնաւանիքը կը պարունակէ հետեւեալ լեզուները.

1. — Հունգարերեն կամ մանարերեն, որ կը խօսուի՝ Հունգարիայու, ինչպէս նաև մասսամբ Ռուսանիոյ, Պուլգովինիոյ և Աւստրիոյ մէջ, ընդամէնը 10 միլիոն հոգի կողմէ: Հունգար ժողովուրդը բոլոր ուկրո-Փիննական ժողովուրդներէն մեծ ապոյնն է: Անոնց գրականութիւնը կը սկսի Ժ. գարէն:

2. — Վոկոլյերեն, Աւրալի մօտ. կը խօսուի 5000 հոգի կողմէ միայն:

3. — Սակեակերեն, որ կը խօսուի վերայիշեալ լեզուի գրացնութիւն մէջ:

4. և 5. — Զիրեներեն և վուշիակերեն, որոնք միասին կը կոչուին պերմանական խումբ: Զիրենները կը բնակին վուշկառչի և Արխանկելուքի նահանգներուն մէջ, իսկ վուշակները՝ Վիշտակայի, Գազանի և Աւաֆայի նահանգներուն մէջ: Այս վերջինները կը կոչուին նաև Կոմի:

6. — Չերմիսերեն, որ կը խօսուի գըլիստառաբար Վիշտակայի, Գազանի և Աւաֆայի նահանգներուն մէջ:

7. — Մորուիներեն, այս լեզուն խօսող

ժողովուրդը՝ մորտուիններ, մօտաւորապէս մէկ միլիոն են և կը բնակին Սիմպիրկիի, Բենզայի, Սարադովի, Սամարայի, Նիժնի-Նովգորոդի և Թամազովի նահանգներուն մէջ:

8. — Ֆիններեն, որ կը խօսուի Ֆինլանդայի, Շուէտի և Նորվեգիիոյ հրւիսային կողմէրը: Վիններէնի հետ մօտաւոր կապ ունին և մէկ խումբ կը կազմեն:

ա) Դարեկերեն, որ կը խօսուի Գարէլիոյ, Արխանկելուքի, Օլոնեցիի, Դույէրի և Նովգորոտի շրջաննին մէջ:

բ) Վապտերենը, որ կը խօսուի Հարէլիոյ Վոկտերենը, որ կը խօսուի Լենինգրադի շրջաննին մէջ:

գ) Եսդոններենը, որ կը խօսուի Եսդոնիոյ և Լիվուանիոյ մէջ:

դ) Լիվուանիոյ, որ կը խօսուի Դուրլանատայի հրւիսիս:

5. — Լավիններեն կամ լավիերեն. կը խօսուի Շուէտի և Նորվեգիոյ հրւիսային կողմը, Լավիանատիոյ և մասսամբ Ֆինլանդայի և Ռուսիոյ մէջ: Կը թուի թէ այս ժողովուրդները պատկանած են ուրիշ ցեղի մը, բայց հետազային փոխ տռած առաջ ֆիննական լեզուն:

Աւկրո-Փիննական լեզուախումբի հասանայինները կը գտնուէր այն տարածութեան վրայ որ Կ'երկարի մէկ կողմէն մինչև Սառուցհալ Ովկիանոս և Սպիտակ Շով և միւս կողմէն մինչև միջին Վոլգան, Աւրալէն այս կողմէ Այստեղ այդ ժողովուրդները կ'ապրէին. Հնդկերուսական ընտանիքի և յատիական արիական և պալթիկ-ուլաւական ճիւղերու և ալբայական ընտանիքի գրացնութեան մէջ: Այս իրողութեամբ կը բացարուին այն բազմաթիւ կրն փոխառութիւնները, որոնք կատարուած են փոխառագրար այս երեք լեզուախումբերու միջևս Արիական խումբէն եղած բազմաթիւ փոխառութիւնները կարևոր են մեզի այն տեսակէտով, որ ցայց կատ տան արիական ճիւղի աշխարհազրական դիրքը այդ հնագոյն շրջաններուն, ինչպէս նաև անոնց քաղաքակրթական բարձրութիւնը առանարակ և մասնաւորաբար բաղդասմամբ ուկրո-Փիննական ժողովուրդներուն առանց որուն-այդ փոխառութիւնները կ'ամ բնակ տեղի պիտի չունենային և կամ շտա աւելի սահմանափակ թիւով պիտի ըլլային: Հետազա-

յին, զանագան ժողովուրդներ գուրս գալով իրենց նախահայրենիքէն, զաղթեցին տարբեր ուղղութիւններով. ոսղեակները և զոկուլները անցան Աւրալը և հաստատուեցան Ասիոյ մէջ, հաւնգարները երկար ճամբորգութենէ յետոյ Թ. գարուն հաստատուեցան արգի Հաւնգարիոյ մէջ, զողիակները և զիշեները բարձրացան զէպի հիւսիս, իսկ ֆինները Զ. գարուն Ֆինլանտա գացին. միայն մորտուիններն ու չերեմիսները մնաւ ցին իրենց տեղերը:

Գիտականները ուկրո-ֆիննական ընտանիքին կը կցին նաև նենեցներու լեզուն՝ նենեցերէնը (սամոյերէն), նենեցները կը հաշուին 18,000 ահճ. ցրուած ընդարձակ տարածութեան մը վրայ, Ուրալէն մինչև Սառուցեալ Ովկիանոս Հետզէեակ սակայն կը հաստատուի այն հնմազրութիւնը թէ նենեցերէնը ոչ մէկ մէկ ճիւզն է ուկրո-ֆիննական լեզուարին, այլ երկուքը միասին նախապէս կը կազմէին ուրալեան խումբը, որուն նախահայրենիքը Աւրալի ստորոտն էր. անօնք ապա բաժնուեցան երկու խումբերու նենեցական և ուկրո-ֆիննական. Նենեցները անցան Ասիս և մտան մթքական լեզուներու հարեանութեան մէջ, իսկ ուկրո-ֆինները իջան զէպի Վոլգա, ուրիէ ապա ցրուեցան զանագան ուղղութիւններով:

Ուրալեան խումբին կը պատկանի նաև Էսկիմոյերէնը, որով խօսուները կը բնակին Կրելնանտայի և բենույին Ամերիկայի եղերքներուն վրայ. այսպիսով անոնք միացման գիծ մը կը գտոնան հին և նոր աշխարհներու միջն. Տես Journal de la Société Finno-Ougrienne de Helsinki, Mémoire de la Société Finno-Ougrienne de Helsinki, Le Monde Oriental (Upsal), Finnisch-ugrische Forschungen (Helsinki), Keleti Szemle (Budapest), Ungarische Jahrbücher (Berlin), Studia Fennica (Helsinki), Encyclopédie Française, I, (Paris, Larousse), J. Szinnyei, Finnisch ugrische Sprachwissenschaft (2րդ հատ., 1922, Sammlung Göschen 463, Walter de Gruyter, Berlin); A. Sauvageot, Esquisse de la langue finnoise (Paris, C. Klincksieck, 1949); A. Saareste, Die ostnische Sprache (Tartu, 1932); S. Simonyi, Die Ungarische Sprache (Trübner, 1907).

ԺԷ. — Կովկասեան Անտառիք. — Այս լեռտանիքին պատկանող լեզուները կը խօսուին Կովկասեան լեռաշղթավի երկու և միաներուն փրայ. Այս Ծավէն մինչեւ Կոստաց Մով գտնուած տարածութեան մէջ: Կովկասագէտ լեզուարան Տիրի համաձայն, բոլոր կովկասեան լեզուները ծննդարանական տեսակէառով կը բաժնուեին երեք խումբերուն, 1) Հարաւային կովկասեան կամ Փարբուկեան խումբ, 2) Հիւսիսային որիւմեան խումբ, 3) Հիւսիսային արեւելեան կամ Կոստացին խումբ: Հարաւային կովկասեան խումբը կը պարւնակէ հետեւալ լեզուները. 1) Վրացերէն, 2) միներելերէն, 3) լազերէն, 4) սվաներէն: Վրացերէնի բարբառներն են՝ ուուերէն, կուրիա, իմերէլ, բօւլ, ինչ. սուր և ինիկիլ: Հիւսիս արեւմտեան խումբը կը պարւնակէ, 5) ապխազերէն, որ Կովկասի ամենազժուար լեզուն է, 6) ուպիյսերէն (այս լեզուն խօսով ժողովութեալ այժմ Թուրքիա գազմած է և մոլցած է իր լեզուն), 7) չիրեներէն, որու գիտաւոր բարբառն է կապարտին և երկուքը միասին կը հոչուին ատիլէ: Կառպեան խումբը կը պարւնակէ՝ ա) Զէխնական լեզուներ, 8) չշէներէն, 9) պաց, որ սխալմամբ Կոչուած է նաև դուօ. բ) Աւարօ-անիթ լեզուներ, 10) Աւարերէն, որ Ճաղստանի ամենակարեն լեզուն է և ամրութ այս շրջանի ազգամիջեան լեզուն, 11) անիթ, 12) պոտիխ, 13) կոտոպերի, 14) զարադա, 15) պակուլա, 16) զամալալ, 17) դինի, 18) ախուախ կամ ալուալ, 19) խուարենի, 20) տիտօ, 21) զաբուլի, 22) խունզալ. զ) Տարզուայ լեզուներ, 23) հուրգան կամ խուրգիի և պուշա, 24) վարզուն և զարազարայ, 25) գումարի. դ) Կեդրոնական լեզուներ, 26) լազերէն կամ զազիւմուխ, 27) Արօի, որ կը խօսուի միայն մէկ գիւղի մէջ. բ) Սամոււեան լեզուներ, 28) դապասարան, 29) աղուլ, 30) գուրին կամ լեզկի, 31) ուուդուլ, 32) պուտուխ, 33) նեղ, 34) խենչալուզ, որ կը խօսուի միայն մէկ գիւղի մէջ. 35) ուդիերէն: Այս լեզուներէն վրացերէնը ունի ճին և հին գրականութիւն: Տես Recueil de matériaux pour la géographie et l'ethnographie du Caucase, I-XLIV, Tiflis, Կամառ. SMK, 1881-1915 (սուսիրէնով); Caucasica, I-XI, Leipzig, 1924-1934, Կամառ. Cauc.

(գերմանիկէսով). A. Dirr, Einführung in das Studium der kaukasischen Sprachen, Leipzig, 1928; R. Bleichsteiner, Die Kaukasische Sprachgruppe, Anthropos, XXXII, 1937, էջ 51-74; H. Schuchardt, Ueber den Parsiven Charakter des Transitivs in den Kaukasischen Sprachen, Sitzungsberichte der K. K. Akad. Wissenschaft, Wien, 1895; H. Vogt, La parenté des langues du Caucase, Norssk Tidsskrift for Sprogvidenskap, XII, 1942.

ԺԲ. — Ալբարական Ընտանիք. — Թէ կ զերչնականապէս հասաւառած չէ, բայց կը թուի թէ Վալկայէն մինչև սվկիանոսը ցուրած զանազան լեզուները կը պատկանին մէկ խումբի մը : Այս լեզուախումբի անունը շատ ձեւափոխութիւններու և թիւրքացութիւններու տակի առած է : Երջան մը, գիտունները կը կարծէն թէ հնդկարագան և ամերկանէն գուրս բոլոր միսն լեզուները թրքականին հետ մէկ խումբ կը կազմէն, զոր կը կոչէին բուրանական խումբ . ապա, կմնաւելով ձայնաւորներս ներդաշնակութեան օրէնքին քրայ, որ յատուի է թէ ֆիննական և թէ թրքական լեզուներուն, սկսան կարծի թէ ուկրո-ֆիննական լեզուները ցեղակից են այս խումբին, և երկուքը միասին կոչեցին ուրալ-ալբարական ցեղանիք : Այժմ ապացուցուած է թէ ոչ միայն ֆիննականները կապ չունին աւթայականներուն հետ, այլ նաև թէ նենացները, որոնք ուրալիան ժողովուրդ են, նախապէս ֆիննական ժողովուրդներուն հետ մէկ խումբ կը կազմէին : Հունգարերէն և այլ լեզուներուն մէջ զանուած թրքէն և մոնկուրէն բառերը ցեղակցութեան հետեւանք չեն, այլ միայն փոխառութեան՝ որ կատարուած է ին գրացնութեան շշշանին : Այս առթիւ, յարմար է ուրալիան անունը յատկացնել նենացներուն, իսկ ալբարական անունը պահել այս լեզուախումբին : Շատ անգամ ալ այս լեզուարնատանիքին համար կը գործածուի բարարական կամ բուրքարտական բառը : Թաթարները սկիպէն մոնկուրէն լեզուով մը խօսող ժողովուրդ էին, այնպէս որ մասին անունը ամբողջին յատկացնել անտեղի է : Թուրք-թաթարական բառը կարելի է յատկացնել առ առա-

ւելի թուրքերուն և մոնկուրէն միասնարար, գուռ ձգելով տունկուսները :

Ալթայական ընտանիքը կը պարունակէ երեք ճրւղեր . — 1) Թուրքական, 2) Մոնկուրական և 3) Ցունկուսական :

Ալթայական ժողովուրդներու հագոյն յիշատակութեան կը հանդիպինք ն. Ք. Երկորդ Կազարամիակին : Զինացիները շարունակ չփման մէջ էին բարբարոս ժողովուրդի մը հետ՝ որուն կը կոչէին Niongnou . ասոնք չինական պարտապնիքէն միւս կողմը մեծ պետութիւն մը հրմած էին որ Գ. գարուն կործանեցաւ : Կը կարծուի թէ ասոնք հոներն են և կը պատկանին վերոյիշեալ ցեղին : Նոյն զարուն կը յիշուի Sien-րի ժողովուրդը, որ գուր եկած է Մանչուրիայէն, զորս ոմանք մոնկուր՝ իսկ ուրիշներ ալ տունկուս կը համարեն : Մանկու կու կը համարեն նաև աւարները : Աւելի սույն է պատմութիւնը թուրքերուն՝ որոնք բռիթակ կոչուած են չինացիներուն կողմէ և որոնք Աւարներու պետութիւն աւելրականներուն վրայ 552 թուականին հիմնեցին մեծ կայսրութիւն մը, որ կը տարածուէր Կասպից Մովէն մինչև Տորէա : Այս կայսրութիւնը կործանեցաւ Ը. գարուն և անոնց յաջորդեցին ույղուրները : Մոնկուրէն յիշատակուած են չինացիներու կողմէ է . գարեն սկսեալ : Մոնկուրական ժողովուրդ մըն էին քիթանները, որոնք 907ին Զինաստանի հրսիսալին մասին տիրացան և որոնց անունէն յարաջացած են արարերէն խալայ, հայրէն խրայ ձեռերը՝ որոնք Զինաստանը կը մատանանէն, և Ղարաբաղի բարբառով խարայի շաբաթ խամայի համար որ կը հշանակէ ստեղծ, անուոնիւ : ԺՊ. գարու սկիպէրը, ձենկիք Խանի ձեռքին տակ, մոնկուրները կազմեցին մեծ պետութիւն մը՝ որ զարմանալի արագութեամբ նուածեց Ճափնին մինչև Ազգի Ազգական Մովի եզրերը ինկած ինքիրները : Սակայն ԺԷ. և ԺԸ. զարերուն մոնկուրները ինկան մանչուրներու տիրապետութեան տակ : Թուրքերու և մոնկուրներու պատմութիւնէն նուազ ծանօթ է տունկուսներու պատմութիւնը : Ասոնք Մանչուրիոյ կին ժողովուրդն են, յիշատակուած ն. Ք. 2000? տարիներ առաջ : Է. գարուն Յ. Ք. ասոնք կազմած էին քաղաքակիրթ պետութիւն մը՝ որ կը տիրերէ արագութիւն տակ : Թուրքերու և մոնկուրներու պատմութիւնները պատմութիւնները : Ասոնք Մանչուրիոյ կին ժողովուրդն են, յիշատակուած ն. Ք. 2000? տարիներ առաջ : Է. գարուն Յ. Ք. ասոնք կազմած էին քաղաքակիրթ պետութիւն մը՝ որ կը տիրերէ արագութիւն տակ :

չուրիոյ և Թորէայի: Այս պետութիւնը կանգուն մասց մինչև ժ. դար, երբ յիշեալ երկիրները նուաճուեցան մոնկոլ քիւ-տաններու կողմէ: Այնուհետեւ, մի քանի անգամ, Մանջուրիան կ'ենթարկուի մերթ մոնկուներու և մերթ տունկուներու իշխանութեան, մինչև Մոթ. դարուն կը կրմուի տունկուն սական Մանչու նոր հարստութիւնը՝ որ կը տիրէ նաև մոնկուներու և Չինաստանի գաւհին մինչև 1912 թուականը՝ երբ հանրապետութիւն կը հռչակուի:

Թթաքան ճիւզի լեզուները շատ ընդարձակ տարածութիւն ունին. գաղթականութեամբ և աշխարհակարութեամբ անոնք տարածուած են այսօր Մակեզօնիայէն մինչև Սիպերիոյ Գոլիմ գետը, Եսագուներու մօս և ունին մօտաւորապէս 40 միլիոն խօսող: Լեզուի զլիաւոր բարբառներն են՝ ալբայ, կոյպալ, զարակաս, բարաց, բրկիզ, պաշգիր, սարդ, բուրգմէն, ուլյուր, գիշազ, զումբուխ, նոկայ, պալիար, եռւուզ, ազրպիյնանի, երկմի բարարերէն, զարաշայ, բարաց և օսմանեան, որանց վրայ պէտք է աւելցնել նաև Պալքաններու մէջ բնակող կակառութերու և շրախներու բարբառները և շին կորսուած լեզուներէն՝ օկուզը, բէշենեկը, պուլարը և չալարայ: Հակառակ իրենց շատ ընդարձակ տարածութիւն, այս բուրը իրենց միջն չեն ներկայացներ զգալի տարբերութիւններ. միայն չուվասերենի ընկալեալ ձևերէն կը հեռանայ: Թթաքան լեզուներու ամենահին յիշատակարանը Օրխոնի արձանագրութիւններն են, Դարագործումի մայրաքալաքին մօս, 735 թուականէն: 2-3 դարեր ետք կը սկսի թթաքան կրօնական գրականութիւնը: Սելճուկները տկար գրականութիւն մը ձգած են ժկ. դարէն: Թուրքերը մեծ ազդեցութիւն գործած են իրենց դրացի և նուաճած ազգերուն վրայ: այսպէս՝ սարթերը թթացած պարսիկներ են, մոնկուներու պետական լեզուն թթաքերէնն էր, Լեհաստանի հայերը թթացած էին և ունէին հայատառ թթերէն գրականութիւն. նոյնը նաև Թուրքիոյ մէջ, ինչպէս և յոյներու մօս: Հայերէնը, յունարէնը, քիւրտերէնը, ալպաներէնը, պուլկարերէնը, ոռուսերէնը և ոռումաներէնը շատ բառեր փոխ առած են թթաքերէնն: Բնդհակառակը, թուրքերը շատ ազդուած

են արաբիներէն, պարսիկներէն, մասսամբ ալյոյներէն: Մոնկուլական լեզուները, հակառակ մոնկուլական խոչոր արշաւանքներուն, իրենց երկրէն գուրս ընդարձակ տարածուած են մը վրայ սփոռուած չեն և թթաքան լեզուներէն աւելի նման են իրարու: Անոնցմէ զլիաւորներն են, բացի Մոնկուլիոյ և Թիպէթի մոնկուլերէնէն, զալմիզերեկնը՝ Աստրախանի շրջանին մէջ, պուրիաբերեկնը՝ Սիպերիոյ մէջ և այլուզ կամ հեզարա՞ որ Աֆղանստանի մէջ խօսուած մոնկուլերէննէ: Մոնկուլերէնի հնագոյն յիշատակարանը ժկ. դարէն է: Տունկուսական լեզուները կը տարածուին նիսէյ գետէն մինչև ովկիանոսը: Տունկուսական գրականութիւնը կը սկսի ժկ. դարէն: Տես B. Laufer, Skizze der Mongolischen Literatur, Keleti Szemle, VIII, Budapest, 1907; M. Poppe, Izvestija AK. Nauk, 1937, էջ 1281-1301; N. N. Poppe, Grammatika pis'mennomongol'skogo yazika Moskva-Leningrad, 1937; G. D. Sanzeev, Grammatika buryat-mongol'skogo yazika, Moscou-Leningrad, 1941; O. Kovalevsky, Dictionnaire mongol-russe-français, I-III, Kazan, 1844-1849; N. N. Poppe, Prakticeskiy uchebnik mongol'skogo razgovornogo yazika, Leningrad Vostocnij Institut Imeni A. S. Enukidze No. 41, Leningrad, 1931 և Uchebnik mongol'skogo yazika, No. 46 նոյն շարքէն, Leningrad, 1932.

ԱՆՌԻՇԱՒԱՆ ՎՐԴ. ԶԴՂԱՆՆԵԱՆ

(Շարունակելի 16)

